ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Անգլերենի դասավանդման մեթոդիկա |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Գայանե,Մարգարյան,Վարդգեսի<br>Անգլերենի ուսուցչուհի<br><br>055969644 gayanemargaryan34@gmail.com<br><br>Անգլերեն<br><br>3-12 |
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջն. դպրոց Կենտրոնական փողոց<br>+37493385497<br>kotaykvil@schools.am |

# Բովանդակություն

**Ներածություն** **3**
**Հիմնական բովանդակություն** **6**
**Եզրակացություններ, առաջարկություններ** **19**
**Օգտագործված գրականության ցանկ** **20**
**Հավելվածներ** **22**

# Ներածություն

**ՈւսուՄնական տարվա նպատակներն են՝**

1. **Սովորեցնել տառերը և հնչյունները**

Examples՝
Capital  letter Aa - sounds [ ei ] or  [ǽ]
Capital letter Bb – sounds  [ b ]
Capital letter Cc – sounds  [ s ] or  [ k ]
Capital letter Dd – sounds  [ d ]

2. Ուսուցումը սկսել բանավոր խոսքով:

3. Զարգացնելով լսելու, հասկանալու, կատարելու, խոսելու կարողունակություններ:

4. Վերջնարդյունքը՝ ճանաչել տառերը և հնչյունները :

5. Տիրապետել կարդալու և գրելու տեխնիկային :

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | Ի՞նչ դեր ունեն անգլերենի դասավանդման մեթոդները 3-րդ դասարանում,անգլերենի ժամին Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջն.դպրոցի օրինակով |

| | |
|---|---|
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին<br>.լեզվական գրագիտություն և կարողունակություն,<br>.սովորել սովորելու կարողունակություն |
| | |
| **Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | 3-րդ դասարան |
| | |
| **Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)** | Հետազոտությունը իրականացրել եմ դի-տարկման մեթոդի միջոցով, քանի որ աշխատում եմ կրտսեր տարիքի մասնավորապես 3-րդ դասարանի ախակերտների հետ ,որոնք ողջ դասի ընդացքում իմ տեսադաշտում են գտնվում:Արտահայտման ռուբրիկի միջոցով գնահատել եմ երեխաների բանավոր խոսքը,այնուհետեվ վերլուծել այն:Հետազոտության ավարտին ես դարձյալ կատարել եմ վերլուծություն: |
| | |
| **Հետազոտության իրականացման ժամանակահատվածը** | 13.08.23<br>25.09.23 |
| | |

6

# Հիմնական բովանդակություն

| | |
|---|---|
| **Գրականության ակնարկ**<br>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:<br><br>**Պարտադիր է կատարել հղում աղբյուրին** | |
| | |

**Հետազոտության ընթացքը**

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան ներկայացնում է ժամանակակից լեզվաքաղաքականության և լեզվակրթության գլխավոր մոտեցումներն ու պահանջները, լեզուների ուսուցման և ուսումնառության հայեցակարգերը, սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները, լեզվակրթության մեկնաբանումը սոցիալական քաղաքականության տեսանկյունից, մասնավորապես բազմալեզվության, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական արժեքների սերմանումը, լեզվական միջոցների յուրացումը՝ ուղղված ժամանակակից լեզուների բնագավառում սովորողների հաղորդակցական կարողունակությունների ու հմտությունների զարգացմանը: Օտար լեզուների ուսուցման հաղորդակցական ուղղվածության գերակայությունն առանձնահատուկ ընդգծվում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության և լեզվակրթության հիմնական փաստաթղթերում:

Հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելուն շատ քիչ ժամանակ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Վերոնշյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ նպատակները՝

1. օտար լեզու սովորելը հնարավոր դարձնել ուշադրության կենտրոնացմամբ,
2. ուսուցանվող նյութը տեղափոխել սովորողի աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:

Հետազոտական աշխատանքի նպատակներից բխող խնդիրներն են՝

1. հասկանալ սովորողի գիտելիքների նախնական պաշարը

2. գիտելիքների պաշարը պահեստավորել երկարատև հիշողության մեջ

3. օտար լեզվից ունենալ մնայուն գիտելիքներ. ուսուցանվող նյութը կրկնել, ամրապնդել, կիրառել, կապակցել անցած թեմայի հետ

Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները՝

- մտաբերում
- նյութի սփռում ժամանակի մեջ:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ

«գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս:

Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Այս ձեռնարկում մենք դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

*1.* Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.

2. Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում։ Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը։

*Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:*

Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելւվ իրականացվել այս հնարը։

Օրինակ՝ *1. Class*- գաղտնաբառ

*Pen, pencil book, copybook, textbook,*
*Chalk, desk, chalkboard*

*2. Colours – orange, black, white, blue*
*Blue, red, pink, green, grey.*

*3. Family – father, mother, sister, brother*
*Aunt, uncle, cousin, niece, nephew.*

Կենտրոններով աշխատանք

Ստեղծվում են *4-5* հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Կենտրոններ.

- **School**
- ***Family***
- **Colours**
- ***The ABC***



## ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ուսուցման պլանավորումը ենթադրում է ոչ միայն դասերի պլանավորում, այլև ուսումնական գործունեության պլանավորում առավել ընդհանրական մակարդակով: Այդ առումով ստորև ներկայացվում են պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ: Օրինակ՝ Բլում-Անդերսոնի ատիճանակարգումը օգտակար է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի: Այս հատվածում ներկայացվում են նաև այլ գործիքներ, որոնք նպաստում են ուսուցումը ավելի խելամիտ դարձնելուն:

Բլյումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական նպատակները կամ ավելի շուտ կրթական վերջնարդյունքները: Այն առաջարկվել է համանուն հեղինակի կողմից *1956* թվականին, նպատակ ունենալով բարելավելու առարկայական ծրագրերի և դրանց գնահատման, մասնավորապես քննությունների շուրջ դասավանդողների միջև փոխըմբռնումն ու հաղորդակցությունը: Հիմնական նպատակն այստեղ գիտելիքի ծավալի ու խորքայնության չափելիության ապահովումն է, որը այս մեթոդաբանությամբ թույլ է տալիս չեղարկել բոլոր վերացարկված սահմանումները: Վերացարկումները չենթարկվելով չափագրման դժվար գնահատելի են դարձնում գիտելիքի գնահատումը:

| | |
|---|---|
| | |
| | |

## Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Այսպիսով, հաշվի առնելով օտար լեզվի դասավանդման արդյունավետությանն ուղղված վերոնշյալ մեթոդներն ու միջոցները, կարող ենք նշել, որ<br>• յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է,<br>• հետևաբար, մեկ դասարանում աշխատող մեթոդը կարող է մեկ այլ դասարանում չաշխատել,<br>• օտար լեզվի ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել, որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչը,<br>• արդյունավետ է, երբ գիտելիքը աշակերտին փոխանցվում է կապակցված և համակարգված ձևով,<br>• ուստի օտար լեզվի ուսուցման ատինանակարգումը ուսուցչին հնարավորություն է տալիս ուշադրության կենտրոնում պահելը, թե ինչ չափով են աշակերտները կարողացել կապակցել գիտելիքը և դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք: |
| | |

| **օգտագործվող մեթոդներ** | ա)  Տառերի և հնչյունների ուսուցումը բանավոր խոսքի հետ միաժամանակ՝ Listen and Repeat<br>Examples՝<br>Capital  letter Aa - sounds [ ei ] or  [ǽ]<br>Capital letter Bb – sounds  [ b ]<br>Capital letter Cc – sounds  [ s ] or  [ k ]<br><br>բ) Բանավոր խոսք – Listen and Do<br>Նպատակը՝ զարգացնել լսելու, արտասանելու կարողունակությունները:<br><br>գ) Երգերի միջոցով ուսուցանել քերականական նյութը՝ Present Indefinite<br>a)  This is the way. We Wash our hands<br>Every day in the morning.<br>b) This is the way he goes to school<br>Every day in the morning.<br><br>a)  Օրինակում՝  I դեմք ( wash )<br>b)  Օրինակում՝  III դեմք եզակի թիվ ( goes )<br>Այստեղ ուսուցանվում է նաև ազդանշանային բառերը՝ - every day (Present Simple)<br><br>Present Continuous – ի ուսուցումը<br>One and two and three and four<br>Now I am sitting on the floor…<br><br>Այստեղ ուսուցանվում է նաև ազդանշանային բառը now- ն |
|---|---|

| | |
|---|---|
| | 3) Ba – ba - Black sheep երգի միջոցով ուսուցանվում է<br>General question- Have you?<br>Պատասխանները՝<br>Yes sir, No sir<br><br>4) Բանաստեղծության միջոցով սովորում ենք `<br>Family թեմային վերաբերող բառերը՝<br>This is my father father, mother<br>This is my mother sister brother<br>This is my sister hand in hand<br>This is my brother with one another<br><br>5) Կատարում ենք ջերմացնող վարժություն միաժամանակ ուսուցանում ենք դեմքի և մարմնի մասերին վերաբերող բառերը:<br>Ուսուցանումը ուղեկցվում է ֆիզիկական վարժանքով, աշխուժացնում ենք երեխաներին և կոփում մարմինները:<br><br>6) Թվերի ուսուցումը սլայդների գործածումով և երգով՝ ինչպես ասում են շատ անգամ լսել 1 անգամ տեսնել:<br><br>7) Հեքիաթների հերոսներին ծանոթացնել մուլտֆիլմներ դիտելով:<br><br>8) Դերախաղերով սովորեցնել տարվա եղանակերը և ամիսները՝ տղաները կներկայացնեն տարվա եղանակները, աղջիկները՝ ամիսնեը:<br><br>9) Slide – երով սովորել պատմել պատմել |

´´ My Day " թեման

10) Նկարել " My House " –ը` հարստացնել բառապաշարը

Dining – room , bedroom, kitchen, bathroom,

Mirror, towel, cupboard, wardrobe, sideboard,

bookshelf.

11) Օրվա ժամերը սովորեցնել ողջույնի և հրաժեշտի խոսքերով

Good morning!      Hello!

Good afternoon!     Hi !

Good evenig

Good nighit

12) Meals

Breakfast- bread, butter, cheese, jam.

Lunch – an apple, a cake.

Dinner- soup, cereal, meat.

Supper – tea, sandwiches, milk.





# Օգտագործված գրականության ցանկ


1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020:

2. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014:

3.ԱÜ¶ÈºðºÜÆ ¸²ê²¶ðøºðÆ êîºÔÌØ²Ü Ð²Ôàð¸²Îò²Î²Ü êÎ¼´àôÜøÜºðÀ Î³ñá Կարապետյան,
Ü»ÉÉÇ Նալբանդյան


# Հավելվածներ

| Հաշվետվության կցված նյութեր<br><br>• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>• Նկարներ<br>• Արդյունքներ | |
|---|---|